ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ — Մանկավարժական գործընթացը տարրական դպրոցում

ԱՌԱՐԿԱ — Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)

ՀԵՂԻՆԱԿ — Աբրահամյան Ռիմա

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ — Խնածախի միջնակարգ դպրոց <<ՊՈԱԿ>>

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս _____

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

2. Տարրական դպրոցում մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում 5

2.1. Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան տարրական դպրոցում 13

2.2. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան տարրական դպրոցում 14

2.3. Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում 14

2.4. Տարրական դպրոցում կիրառվող ուսուցման մեթոդների դասակարգումը 15

3. Եզրակացություն 23

4. Օգտագործված գրականության ցանկ 24

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Համաշխարհային զարգացումների դարաշրջանը, որը խորհրդանշվում է նոր գիտելիքների ինտենսիվ ստեղծմամբ, իր ազդեցությունն է ունենում նաև կրթության ոլորտի վրա:

Այսօր անհրաժեշտ է, որ մարդ ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, այլև կարողանա այդ գիտելիքները համապատասխանաբար կիրառել: Արդի հասարակության մեջ ապրող մարդուն անհրաժեշտ են հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում ունենալու, իր որոշումները գնահատելու ու դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ ու հմտություններ:

Կրթության առաջնային խնդիրը պիտի դառնա ոչ թե աշակերտների կողմից որոշակի գիտելիքների պաշարի, կարողությունների ու հմտությունների յուրացումը, այլ ինքնուրույն սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու ու այն վերամշակելու, կարևորը առանձնացնելու, դրանք հիշելու և իր իմացածի հետ կապ ստեղծելու աշակերտի կարողությունը:

Մանկավարժական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում ուսուցչի դերի լիարժեք կայացմանը, որի մեջ մտնում են ուսուցչի մասնագիտական ունակությունները, կարողությունները, հմտություններն ու էթիկան:

Ուսուցչի հաջողությունը մեծապես պայմանավորված է նրա թե՛ անձնային, թե՛ մասնագիտական որակներով: Նրա դերից և աշխատանքի որակից է կախված, թե վաղն ինչ անհատներ կյանք կմտնեն, և ովքեր կձևավորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան: Շատ կարևոր է նաև ուսուցչի մարդ տեսակը, նրա վարքագիծը, քանի որ նա վառ օրինակ է հանդիսանում աշակերտի համար: Դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի իր դերի նշանակությունը:

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի

ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար: Պատահական չէ, որ մեր հասարակությունը տարրական դպրոցի ուսուցչին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր երեխաներին և մեր երկրի ապագան, ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը: Աներկբա է, որ տարրական դպրոցի ուսուցիչն աշակերտի համար հեղինակություն է, իսկ նրա խոսքը՝ օրենք: Սա էլ ավելի է բարձրացնում ուսուցչի պատասխանատվությունը սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում:

Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը: Երեխայի հոգեկան և անձնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից:

<u>Հետազոտության նպատակն է՝</u> ուսումնասիրել և վերլուծել մանկավարժական գործընթացը տարրական դպրոցում, ինչպես նաև, դասվարի աշխատանքի իրականացման առանձնահատկություններն արդի պայմաններում և բացահայտել նրա դերը երեխայի անձի զարգացման գործում:

<u>Հետազոտության խնդիրները՝</u>

- Ուսումնասիրել և վերլուծել տարրական դպրոցի ուսուցիչին ներկայացվող մանկավարժական պահանջները,
- Բացահայտել դասվարի գործունեության առանձնահատկությունները անձի ձևավորման գործում:

2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արդյունավետ ուսուցումը և ուսումնական ծրագրերի ստեղծումն ու զարգացումը, որ խիստ էական են կրթական համակարգի համար, առանձնապես կարևորվում են հայ իրականության մեջ, որտեղ կրթությունը միշտ էլ համարվել է հիմնարար արժեքներից մեկը: Կրթությունն անհատի և հասարակության զարգացման առաջընթացի լավագույն միջոցն է: Տարրական կրթության կատարելագործումն ամենաառաջնային ազգային խնդիրներից մեկն է:

Այս պարագայում անհրաժեշտ է, որ ուսուցիչները կարողանան ձերբազատվել դասավանդման կարծրացած, ձևական մեթոդներից ու հնարքներից և որդեգրեն նորերը: Սույն խնդիրը լուծելու համար պետք է օգնել ուսուցիչներին, որպեսզի նրանք կարողանան.

- Ըմբռնել կրթական համակարգի զարգացման արդի միտումները
- Ընդունել նոր մոտեցումներն ու հայեցակարգերը, ուսումնասիրել արդյունքները
- Յուրացնել դասավանդման նոր մեթոդներ ու հնարքներ

Համագործակցել հնարավոր բոլոր գործընկերների հետ, ովքեր հնարավորություն ունեն կրթության գործն ավելի սերտորեն կապել իրական հասարակական կյանքին՝ սովորողների մեջ հանդուրժողականություն և հարգանք ձևավորելու իրենցից տարբերվող մարդկանց նկատմամբ, ինչը կօգնի աշակերտներին կառուցել իրենց փոխհարաբերությունները, ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ և դառնալ առավել պատասխանատու:

Ուսուցումն ու ուսումնառությունը հարափոփոխ են, ինչպես հասարակությունը: Հասարակական փոփոխություններն են, որ կանխորոշում են ուսումնական ծրագրերի չափորոշիչները, դասավանդման մեթոդիկան և հնարքները, սովորելու ռազմավարությունը:

Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ նոր մոտեցումների և սկզբունքների հիմքում ընկած է դասավանդման մեթոդիկայի մեջ կիրառվող ամբողջական, միասնական կաղապարը, որոնք նկարագրվում են՝ իբրև արդյունքի վրա հիմնված, գործունեության վրա հիմնված, աշակերտակենտրոն,

փոխներգործուն, համագործակցային համակարգեր: Հայեցակարգային այս կաղապարը հնարավորություն է ընձեռնում կիրառել և փոխներգործուն հարաբերություններ ստեղծել ուսուցչի/ սովորողի, բովանդակության/ նպատակի, մեթոդների/ սկզբունքների, տեխնիկական և այլ ուսումնական նյութերի օգտագործման, ինչպես նաև ուսուցման/ուսումնառության գործունեությունների միջև: Անհրաժեշտ է նաև խթանել երեխաների ֆիզիկական, զգացմունքային, մտավոր, ստեղծագործական և ճանաչողական զարգացումը և ուսումնական միջավայրը կազմակերպել այնպես, որ այն լավագույնս նպաստի սովորելուն:

Ինչ պետք է իմանան սովորողները և ինչ կարողանան անել: Այս հարցի պատասխանը պետք է ընկած լինի ուսումնական ծրագիր պլանավորելու և իրական կյանքի հետ առնչվող իմաստավորված ուսուցում կառուցելու հիմքում, որը կնպաստի սովորողների անհատական զարգացմանը, դրական շարժառիթների առաջացմանը, գիտելիքների ձեռքբերմանը և գնահատման ճիշտ կազմակերպմանը:

Գործունեության վրա հիմնված այս մոտեցումն ընդգրկում է ուսուցիչների և սովորողների պահանջմունքների ու նրանց գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը: Խնդիրն այն է, որ դասավանդման որակի վերաբերյալ դատողությունների հիմքում դրվում են գործունեության կատարման մասին տեղեկությունները, այսինքն՝ ուսուցչի տված «արդյունքը» :

«Ինչ գիտեն ուսուցիչները և ինչ կարող են անել, մեծապես ազդում է այն բանի վրա, թե ինչ են սովորում աշակերտները»: Այսօր սա հնարավոր է հաջողությամբ տեղավորել ուսուցման/ուսումնառության համատեքստում:

Մասնագիտական ուսուցման ազգային վարչությունը փնտրում և կանաչ ճանապարհ է տալիս այն ուսուցիչներին, ովքեր կարողանում են արդյունավետորեն նպաստել աշակերտների ուսումնառությանը, ինչպես նաև դրսևորում են գիտելիքների բարձր մակարդակ, հմտություններ, վարք և կատարողականություն, որոնք համապատասխանում են ներքոհիշյալ չափորոշիչներին.

- Ուսուցիչը հոգով-սրտով նվիրված է աշակերտներին և նրանց ուսումնառության գործին, դրսևորում է կրտսեր երեխաներին հասկանալու կարողություն: Ուսուցիչն աշխատում է այն համոզմունքով, որ բոլոր աշակերտները կարող են սովորել՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի

անհատական առանձնահատկությունները։ Նրա աշխատանքի հիմքում ընկած են աշակերտների հետաքրքրությունների, պահանջմունքների, ունակությունների, հմտությունների, ընտանեկան հանգամանքների և ընկերական հարաբերությունների վերաբերյալ գիտելիքներն ու կատարած դիտարկումները։

- Ուսուցիչը տիրապետում է իր մասնագիտությանը և գիտի, թե ինչպես է պետք դասավանդել։ Նա խորապես գիտի իր դասավանդած առարկան և հասկանում է, թե ինչպես են տվյալ ուսումնական առարկայի գիտելիքները ձեռք բերվում, կազմակերպվում, առնչվում այլ առարկաների հետ և կիրառվում իրական կյանքում։
- Ուսումնառությունը իմաստալից, նպատակային դարձնելու համար ուսուցիչը դասավանդման բազմազան ձևեր ու ռազմավարություն է կիրառում։ Նա տիրապետում է դասավանդման տարբեր մեթոդների, գիտի, թե երբ և որ իրադրության մեջ դրանցից որն է անհրաժեշտ կիրառել, ինչպես կազմակերպել ուսուցումը՝ բավարարելու համար սովորողների նպատակներն ու շահագրգռությունը։
- Ուսուցիչները տիրապետում են գնահատման տարբեր եղանակների և գիտեն, թե ուսման նպատակների առումով ինչպիսի գիտելիքներ ու հմտություններ է անհրաժեշտ գնահատել։ Տեստերը, ստուգման եղանակները որոշակիորեն ազդում են այն բանի վրա, թե ինչ են սովորում դասարանում։ Անհրաժեշտ է ապահովել սովորողների հետ անմիջական և մշտական հետադարձ կապ։ Իրական գնահատումը պետք է կենտրոնանա այն բանի վրա, թե ինչ կարող է անել աշակերտը և ինչ է անում։
- Ուսուցիչը խորհում է իր գործունեության մասին, այսինքն՝ թե ինչ է անում ինքը, և ինչպես են իր վարվելակերպն ու դասավանդումն ազդում աշակերտների ուսումնառության վրա։
- Ուսուցիչը սովորողների համայնքի անդամ է։ Նա կրթական քաղաքականության մշակման, ուսումնական ծրագրերի ստեղծման և ուսուցիչների վերապատրաստման հարցերում համագործակցում է այլ մասնագետների հետ, ուղիներ է գտնում համագործակցելու նաև ծնողների հետ՝ արդյունավետորեն ընդգրկելով նրանց դպրոցի աշխատանքներում։

«Դասարանավարությունը»[1] մի հասկացություն է, ըստ որի՝ յուրաքանչյուր ուսուցիչ հնարավորություն ունի և պարտավոր է ստեղծել ուսումնական այնպիսի միջավայր, որը կնպաստի ուսումնառությանը: Դրան հասնելու համար կարևոր է հասկանալ, թե որոնք են արդյունավետ դասարանի կազմակերպման և վարման տարրերը:

Կրթական և ուսումնական նպատակներին ավելի հեշտ հասնելու, աշակերտների մտածողությանը և ինքնուրույն որոշումների կայացմանը հետևելու համար ուսուցիչը պետք է ավելի լավ իմանա, թե ինչ է տեղի ունենում դասարանում: Դասարանի լավ կառավարումը սովորելու համար նպաստավոր միջավայր է ստեղծում՝ ապահովելով աշակերտների գործուն և ակտիվ մասնակցությունը ուսմանը: Ուսուցիչը պետք է լինի աշակերտի խորհրդատուն, ոչ թե սոսկ գնահատողը:

Դասարանը միայն ուսումնական առարկաների բովանդակությունը սովորելու համար չէ: Դասարանում երեխան սովորում է նաև ինքնավստահ ու ինքնագնահատող լինել, ինչպես նաև արդյունավետ աշխատել՝ համագործակցելով դասընկերների կամ այլ մարդկանց հետ: Դասարանում ձեռք բերած փորձառությունը նպաստում է նրա ինքնաճանաչմանը, տարբեր մշակույթների ըմբռնմանը, ինչպես նաև արդարության ու բարոյականության մասին ընդհանուր պատկերացումների ուսումնասիրմանն ու յուրացմանը:

Դասարանը փոքր համայնքն է, որտեղ բոլորն աշխատում են համատեղ, ունեն ընդհանուր նպատակ և, ինչպես ամեն մի համայնք, ունի իր ղեկավարը, որն ուսուցիչն է:

Դասարանի արդյունավետ կառավարումը ենթադրում է.

- Խթանել աշակերտների մտավոր, ֆիզիկական և հասարակական զարգացումը
- Նպաստել ուսումնական նպատակներին հասնելուն.

[1] Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», ձեռնարկ ուսուցիչների համար, Այրեքս, Երևան, 320 էջ, 2001թ.:

- Հնարավորություն ընձեռել աշակերտներին՝ անկախության և ինքնակառավարման հմտություններ զարգացնել և ստանձնել դասարանի կառավարման պատասխանատվության մի մասը.
- Աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ կայուն հարաբերություններ հաստատել.

Եվ որպես արդյունք՝ դասարանում դրական փոխհարաբերություններ և բարի, փոխադարձ վստահության մթնոլորտ ստեղծել:

Դասարանավարությունը դասավանդման կարևոր բաղադրիչն է: Դասավանդման պահանջներն ավելի լայն են, քան առարկայական ուսուցումը: Կառավարումը և առարկայական ուսուցումը դասավանդման երկու կողմերն են, այդ երկուսի փոխներգործությունից են առաջանում արդյունավետ ուսուցման տարրերը: Դասարանի հմուտ ղեկավարումը նպաստում է ուսուցման հաջողությանը, իսկ խրախուսող և հետաքրքիր ուսուցումը նվազեցնում է դասարանավարման հետ կապված դժվարությունները:

Արդյունավետ դասարանավարությունը ենթադրում է նաև հետևյալ չորս տարրերի առկայությունը, որոնք վճռորոշ են դասարանում ուսուցման և ուսումնառության արդյունավետ միջավայր ստեղծելու համար: Դրանք են՝

- Ուսումնառությանը նպաստող մթնոլորտ
- Որոշումների կայացում
- Ուսումնական ծրագիր
- Կարգապահություն, հակասությունների լուծում:

Այսպիսով՝ փորձառու ուսուցիչներն ասում են, որ անհրաժեշտ է ստեղծել դասարան, որտեղ խրախուսվում է մտքերի փոխանակությունը, հարգանքը բոլոր աշակերտների հանդեպ, քաջալերվում է նրանց աշխատանքը և ամրապնդվում է միասնականության զգացումը:[2]

Դասարանի կառավարումը պայմանավորված է հետևյալ արժեքներով՝ ապահովություն, անհատականության հաստատում, պատասխանատվություն և արժանապատվություն, որոնք շատ կարևոր են տարրական դպրոցի աշակերտներին կրթելու և դաստիարակելու համար, քանզի մեծապես ազդում է սովորելու մթնոլորտին:

Երեխաների ապահովության զգացումը դասարանի կառավարման կարևոր տարրերից է: Սա ցույց է տալիս, թե երեխաները որքանով են իրենց անվտանգ ու պաշտպանված զգում դասարանում: Արդյոք նրանց հիմնական պահանջմունքներն ընդունվում և բավարարվում են: Հստակ և մատչելի հանձնարարությունները նպաստում են երեխայի ինքնավստահությանը և դրական տրամադրվածությանը: Երեխան պետք է զգա շրջապատի բարյացակամ վերաբերմունքը: Արդյունավետ ուսումնառության համար աշակերտները պետք է դասարանում իրենց ապահով զգան և չվախենան սովորելու ընթացքում ռիսկի դիմելուց:

Աշակերտները պետք է ունենան ընտրության ազատություն, որը նպաստում է նրանց ինքնագիտակցության բարձրացմանը և զարգացնում է ազատ կամքը: Այս հանգամանքը խթանում է աշակերտին, զարգացնում նրա երևակայությունը, որը տանում է դեպի շրջապատող աշխարհի ավելի խորը ընկալում: Յուրաքանչյուր երեխա անհատականություն է, ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի ու հմտությունների զարգացման համար: Երբ երեխաներն իրենց մտքերն ազատ արտահայտելու հնարավորություն են ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին ավելի լավ ճանաչել նրանց, այլև նպաստում է երեխայի ինքնաճանաչողությանն ու ինքնահաստատմանը, որը տանում է դեպի շրջապատող աշխարհի ավելի խորը ընկալում: Յուրաքանչյուր երեխա անհատականություն է, ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի ու հմտությունների զարգացման համար: Երբ երեխաներն իրենց մտքերն ազատ արտահայտելու հնարավորություն են ստանում, դա ոչ միայն օգնում է ուսուցչին ավելի լավ ճանաչել նրանց, այլև նպաստում է երեխայի ինքնաճանաչողությանն ու ինքնահաստատմանը:

Դասարանի հաջող կառավարման հիմնական միջոցը գործուն ակտիվությունն է, որը բնորոշվում է ակնկալիքների հստակությամբ: Ուսուցիչը պետք է կարողանա իր աշակերտներին ակտիվ դարձնել, այսինքն՝ հորդորել աշակերտներին՝ ստանձնել իրենց ուսումնառության պատասխանատվությունը: Նման մոտեցման դեպքում աշակերտները փորձում են օգնել միմյանց, փորձ են ձեռք բերում և մարզում են իրենց միտքը՝ ասվածի ճշմարտությունը վիճարկելով:

[2] Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում» , ձեռնարկ ուսուցիչների համար, , Այրեքս, Երևան, 320 էջ, 2001թ.:

Դասարանավարության ժամանակակից մոտեցումներին բնորոշ է հետևյալը.

- Ավելի շուտ կանխել, քան շտկել:
- Ավելի շատ խրախուսել, քան պատժիչ մեթոդներ կիրառել:
- Դասարանը համախմբել ընդհանուր նպատակների շուրջ:

Աշակերտները պետք է իմանան, որ իրենց վարքը կախված է ոչ թե պայմաններից, այլ իրենց որոշումներից, և անհրաժեշտ է, որ իրենք կարողանան սեփական զգացմունքները ստորադասել որոշակի արժեքների, նախաձեռնող և պատասխանատու լինել՝ սկսածը ավարտին հասցնելու համար: Քանի որ աշակերտները դասարանի համայնքի անդամներն են, հետևաբար դասարանը նույնքան իրենցն է, որքան և ուսուցչին, ուրեմն աշակերտները պետք է հավասար չափով պատասխանատվություն կրեն: Անհրաժեշտություն չկա, որ ուսուցիչներն անեն այն, ինչը աշակերտները կարող են ինքնուրույն անել, ուստի նրանց վրա պետք է որոշակի պատասխանատվություն դնել:

Դասարանում բոլորը պետք է հարգեն միմյանց մտքերն ու նախաձեռնությունները: Ուսուցիչը պետք է հարգի երեխային՝ որպես անհատ և սովորող՝ չվիրավորելով վերջինիս արժանապատվությունը: Անկախ խմբի աշխատանքում ունեցած ներդրումից՝ համատեղ աշխատանքն անհրաժեշտ է, ուստի երեխաներից յուրաքանչյուրին անպայման ինչ-որ հանձնարարություն պետք է տրվի: Ամեն մեկը պետք է ջանք ներդնի և օգնի մյուսներին: Արդյունավետ ուսուցման համար աշակերտների, ուսուցիչների և դպրոցի ղեկավարության միջև փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ են անհրաժեշտ:

Արդյունավետ ուսուցում/ուսումնառությունն անպայմանորեն առնչվում է կարգապահության հետ: Կարգը պահպանելն ինքնին հեշտ գործ չէ: Սա նման է հիվանդությունը բուժելուն. Անհրաժեշտ է նախ ճշգրիտ ախտորոշում, ապա համապատասխան բուժում: Եթե ախտորոշումը ճիշտ է և համապատասխան բուժամիջոց է ընտրվել, ապա արդյունքը գոհացուցիչ կլինի:

Այնուամենայնիվ, որոշ ուսուցիչներ նախընտրում են պատիժը, որը հավասարազոր է սխալ դեղամիջոց տալուն, իսկ դա կոտրում է աշակերտին: Եթե դասերը հետաքրքիր են, և աշակերտների մասնակցությունն ապահովված է, ապա կարգապահությունը բարձր կլինի: Եթե ուսուցիչը լավ է դասավանդում և հոգում է իր

աշակերտների մասին, մեծանում է նրա հեղինակությունը: Այդ դեպքում աշակերտները հարգում և վստահում են նրան:

Եթե ուսուցիչը պարզում է, որ աշակերտներն իսկապես չեն սիրում դպրոցը, որ խիստ մեծ է անհարգելի բացակայությունների թիվը, կամ էլ դասարանում աճում են հակասություններն ու ագրեսիան, ակնհայտ է, որ նա լուրջ պրոբլեմներ ու թերություններ ունի դասարանավարման հարցում: Ինչ խոսք, դժվար է միանշանակ պնդել, թե դպրոցական փորձառությունը աշակերտի համար միշտ պետք է հաճելի լինի, սակայն դպրոցը, ընդհանուր առմամբ, պետք է միշտ ցանկալի վայր լինի երեխաների համար:

Ուսուցման մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հարցերը.

- Ինչ է ուսուցանվում:
- Ում է ուսուցանվում:
- Ինչպիսի միջավայրում է ուսուցանվում:
- Ինչպես է ուսուցանվում:

Ուսուցանել նշանակում է ներգործել աշակերտի գիտելիքի, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վրա, որոնք ձևավորում են՝ որպես ուսուցչի գործունեության հետևանք:

Ուսուցանել կարելի է ասելով և մեկնաբանելով, ցույց տալով և ցուցադրելով, սովորողի ջանքերն ուղղորդելով և ուղղություն տալով կամ էլ այս բոլոր գործողությունները համադրելով: Սա էլ հենց թելադրում է, թե ուսումնառությունը խրախուսելու համար ինչպես դասավանդել կամ ինչ ռազմավարություն կիրառել:

Ելնելով ուսուցման առանձնահատկություններից՝ գործունեության ողջ համակարգը պետք է ընդգրկի հետևյալը՝ միջավայրը, մարդկանց, կառուցվածքը, հարաբերությունները, գաղափարախոսությունը, նպատակները, ուսուցման բովանդակությունը, հարմարվելու ունակությունը և կամքը:

Մասնագիտական գրականության մեջ քննարկվում են ուսուցման գործընթացին առնչվող երեք փուլ՝ նախաուսուցման, ուսուցման և հետուսուցման, որոնցից յուրաքանչյուրն ուսուցչի առաջ տարբեր պահանջներ է դնում[3]:

Մանկավարժության տեսության մեջ արդեն իսկ ձևավորվել են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող մի շարք

տեխնոլոգիաներ, որոնք ընդունված է անվանել նորարական կամ անձին ուղղված, անձի ակտիվությունը խթանող տեխնոլոգիաներ։

Ուսուցման ավանդական (վերարտադրողական) տեխնոլոգիան տարրական դպրոցում։ Այս տեխնոլոգիան հիմնված է գիտելիքի, կարողությունների և հմտությունների փոխանցման վրա։ Սա ապահովում է սովորողների կողմից կրթության բովանդակության յուրացումը, դրա յուրացման որակի ստուգումը և գնահատումը։ Այս տեխնոլոգիայի էությունը ներկայացնենք հետևյալ աղյուսակի միջոցով.



Ուսուցման ամենակիրառելի մեթոդը բացատրությունն է՝ համակցված իրազննական նյութերով։ Սովորողների գործունեության առաջատար ձևերն են լսելը և մտապահելը, իսկ գլխավոր պահանջը և արդյունավետության չափանիշը՝ սովորածի անսխալ վերարտադրությունն է։

2.1. Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան տարրական դպրոցում

Զարգացնող ուսուցման գաղափարների կայացման հարցում նշանակալից է Լ. Ս. Վիգոտսկու դերը։ Մինչև Լ. Ս. Վիգոտսկին կարծում էին, թե երեխայի զարգացումը, հատկապես մտածողության կամ մտավոր որակների զարգացումը պայմանավորված է միայն ուսուցման և դաստիարակության գործոնով։ Լ.Ս. Վիգոտսկին ապացուցեց, որ մանկավարժությունը պետք է հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա։

Լ.Վ. Զանկովին հաջողվեց տարրական դպրոցում անցկացված մանկավարժական գիտափորձի արդյունքների հիման վրա ապացուցել, որ կարելի է ապահովել դպրոցականների զարգացումը ուսուցման արդյունավետության բարձրացման շնորհիվ։

[3] Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», ձեռնարկ ուսուցիչների համար, Այրեքս, Երևան, 320 էջ, 2001թ.:

2.2. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան տարրական դպրոցում

Համագործակցային ուսուցման գաղափարները ձևավորվել են դեռևս անտիկ դարաշրջանում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- միջանձնային հարաբերություններ կառուցելու կարողության ձևավորումը,
- անձի զարգացումը և նրա անհատականության ձևավորումը,
- երեխաների հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը,
- ընկերության և փոխօգնության, փոխադարձ պատասխանատվության համոզմունքի ձևավորումը,
- սթրեսի հաղթահարման ունակություն,
- շրջապատի հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը,
- համագործակցային և խմբային աշխատանք իրականացնելու կարողության ձևավորումը:

2.3. Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում

Հարկ է նշել, որ խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման մեթոդ, և որպես ուսուցման ձև, և՛ որպես ինքնուրույն խաղային գործունեություն, և՛ որպես երեխայի անձնավորության համակողմանի զարգացման միջոց:

Տարրական դպրոցում խաղը կիրառվում է.

- որպես ինքնուրույն տեխնոլոգիա (որը կիրառվում է ցանկացած առարկայի, թեմայի յուրացման և ամրապնդման ժամանակ),
- որպես առավել մեծ ու ընդհանուր համագործակցային տեխնոլոգիայի մի տարր,
- որպես արտադասարանական աշխատանքի տեխնոլոգիա,
- որպես սովորողների ծանրաբեռնվածության բեռնաթափման միջոց:

Ի տարբերություն առօրյա խաղերի՝ մանկավարժական խաղն ունի որոշակի հատկանիշներ: Այն ունի նախօրոք հստակեցված ուսուցման նպատակ և դրան համապատասխան՝ կանխատեսվող մանկավարժական արդյունք.

- ավանդական ուսումնական գործընթացի ժամանակ գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսանում է ուսուցիչը, իսկ խաղի ժամանակ գիտելիքի որոշակի աղբյուր չկա,
- ուսումնական գործընթացն իրականացվում է մենախոսության (ուսուցիչը բացատրում է, սովորողը լսում) կամ երկխոսության (սովորողը հարցեր է ուղղում, ուսուցիչը պատասխանում է, կամ ստուգման նպատակով ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին) միջոցով, իսկ խաղն իրականացվում է գործողությունների լեզվով, և խաղի մասնակիցները ակտիվ հաղորդակցման միջոցով սովորում և սովորեցնում են իրար,
- խաղային գործունեությունը պարտադրված չէ. այն հիմնականում ինքնակամ է և ցանկալի,
- խաղային գործունեության ժամանակ մասնակիցը ազատ է ու անկաշկանդ, քանի որ նա հանդես է գալիս որպես դերակատար և չի ճնշվում սեփական «Ես»-ը արտահայտելու մտքից։

2.4. Տարրական դպրոցում կիրառվող ուսուցման մեթոդների դասակարգումը

Բոլոր ժամանակներում «ինչպես սովորեցնել» հարցը հուզել է գիտնականներին և պրակտիկ մանկավարժներին, հատկապես տարրական դպրոցի ուսուցիչներին, որովհետև կրթության որևէ օղակում «ինչպես սովորեցնել» այնքան էական չէ, որքան տարրական դպրոցում։ Ցանկացած գիտելիք հասցեատիրոջը հասցնելու համար անհրաժեշտ են մեթոդներ։ Ուսուցման մեթոդը ուսումնական նպատակներին հասնելու ճանապարհն է, միջոցը։ Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների փոխգործակցության եղանակն է, այն ուղղված է ուսուցման խնդիրների լուծմանը։ Մեթոդը ենթադրում է ուսուցման գործընթացում ուսուցչի և աշակերտների փոխգործակցության եղանակ, որի շնորհիվ աշակերտը յուրացնում է գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ, հմտություններ։ Մեթոդը կրթական գործունեության նախագծված նպատակների և վերջնական արդյունքների միջև կապող օղակն է։

Ուսուցման մեթոդների համակարգում առանձնացվում են ուսուցման հնարները։ Դրանք մեթոդի կարևոր տարրերն են, նրա մեկ գործողությունը, առանձին քայլը, որն օգնում է իրականացնել մեթոդը։

Ավանդական դասակարգում։ Այն սկիզբ է առել հին փիլիսոփայական և մանկավարժական գաղափարներում։ Այսօր դրանք հարմարեցված են ժամանակակից պայմաններին։ Այս դասակարգումը հիմնականում կատարվել է ըստ գիտելիքների աղբյուրի։ Վերջերս դրան են ավելացել նաև գիրքը, համակարգիչը։ Այս դասակարգման մեջ առանձնացնում են 4 մեթոդախումբ՝ խոսքային, գործնական, զննական, աշխատանք գրքով։ Յուրաքանչյուր մեթոդախումբ ունի իր մեթոդական հնարները։

Դիտարկենք նշված մեթոդական խմբերը տարրական դասարաններում կիրառելիության տեսանկյունով.

- խոսքային մեթոդների մեջ են մտնում բացատրությունը, պատմելը, զրույցը, դասախոսությունը, բանավեճը,
- գործնական մեթոդների մեջ մտնում են փորձը, վարժությունները, ուսումնագործնական աշխատանքը,
- զննականի մեջ են մտնում իրազննումը, ցուցադրումը և աշակերտների ուսումնասիրություններն ու դիտումները,
- աշխատանք գրքով մեթոդախմբի մեջ են մտնում ընթերցանությունը, մշակումը, փոխադրությունը, պլանի կազմումը։

Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը նոր պահանջներ առաջադրեց ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

Կրթության արդիականացումը նշանավորվեց ուսուցման գործընթացը ակտիվացնող նոր՝ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ։ Այսօր տարրական դպրոցում կիրառվում է փոխներգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է ուսուցման և ուսումնառության աշակերտակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դասի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռք բերման ճանապարհը։ Նա նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե անհատական, թե՛ խմբային աշխատանքներում։ Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և

հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը գործնականում կիրառելու կարողություններ:

Տարրական դպրոցում ուսուցման ժամանակակից՝ համագործակցային և փոխգործուն մեթոդների կիրառումը և՛ ուսուցչին, և՛ աշակերտներին համագործակցության լայն հնարավորություն է տալիս: Դրանց միջոցով ուսուցիչը արդյունավետ կերպով է կազմակերպում ուսումնական գործընթացը՝ անձնակողմնորոշված մանկավարժության սկզբունքներին համապատասխան: Նորագույն մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների՝

- ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը,
- հետազոտական, հաղորդակցական, համագործակցային կարողությունների զարգացմանը,
- քննադատական, տրամաբանական մտածողության ձևավորմանը,
- մտքերի պարզ և հստակ ձևակերպելու կարողության զարգացմանը,
- արդարանալու, պաշտպանվելու, իր տեսակետը հիմնավորելու, ապացուցելու կարողությունների ձևավորմանը,
- ուսուցիչ-աշակերտ համագործակցային աշխատանքի նոր որակի ապահովմանը:

Փոխգործուն մեթոդներով դասավանդման գործընթացը պրակտիկայում հաճախ դիտարկվում է որպես գործնական և լաբորատոր աշխատանքների ձևեր:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և նրանց վերապատրաստում իրականացնողների կողմից, և բազմիցս ապացուցվել է նրա արդյունավետությունը[1]:

Հայտնի է, որ դաստիարակությունը երևան է եկել մարդկային հասարակության ծագման պահից և գոյություն կունենա, քանի դեռ գոյություն ունի ինքը՝ հասարակությունը: Դաստիարակության բովանդակությունն ու խնդիրները պայմանավորված են հասարակության պահանջմունքներով և անմիջականորեն առնչվում են պրակտիկային:

---

[1] Ասատրյան Զ., «Տարրական կրթության մանկավարժություն», (ուսումնամեթոդական ձեռնարկ), Տիգրան մեծ հրատարակչություն, Երևան, 160 էջ, 2017 թ.:

Արդի դաստիարակչական գործընթացում մանկավարժն իրականացնում է մի շարք դերեր՝ դասավանդող, աջակցող, ուղղորդող, երեխայի իրավունքների պաշտպան, ավագ ընկեր, օգնող, խորհրդատու և այլն: Բազմագործոն դերերն ուսուցչին օգնում են ծագած խնդիրներում արագ կողմնորոշվել, համագործակցության շնորհիվ երեխայի սեփական «Ես» ձևավորելու, որոշակի հասարակության մեջ նրա պատկանելիությունը հստակեցնելու հարցերում: Լեհ հայտնի մանկավարժ Յանուշ Կորչակը գրում է. «Այն դաստիարակը, ով չի կաշկանդում, այլ ազատում է, չի ճնշում, այլ բարձրացնում է, չի խեղաթյուրում, այլ ձևավորում է, չի թելադրում, այլ սովորեցնում է, ոգեշնչման շատ պահեր է ապրում երեխայի հետ միասին»[2]:

Կրտսեր դպրոցականի դաստիարակության խնդիրներն են՝

- տարրական դպրոցում իրականացվող դաստիարակության գործընթացն ուղղել կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը,
- կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակական, հոգևորբարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին,
- ձևավորել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները,
- կազմակերպել աշակերտների իմացական գործունեությունը՝ ապահովելով նրանց հասարակական գիտակցության զարգացումը,
- զարգացնել ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց /թե մեծերի, թե տարեկիցների/նկատմամբ, մշակել մարդկանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու, երկխոսություն ու հաղորդակցում վարելու կարողություններ,
- սիրո և հարգանքի միջոցով բավարարել երեխայի պահանջմունքները, ձևավորել մանկական հասարակության մեջ իր դերի և սոցիալական կարգավիճակի գիտակցում, երեխայի շուրջ ստեղծել բարենպաստ

[2] Бабаева А.Х., Гуманистическая направленность подготовки будущего учителя к воспитательной работе с младшими школьниками. Автореф. дис. канд. пед. наук, М., 1992

պայմաններ և այլն։

Դաստիարակության բովանդակության մեջ, բնականաբար, ընդգրկվում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, (ԳԿՀ), ինչպես նաև անձի վարքագիծը։ Դաստիարակության մեթոդները դաստիարակողի և դաստիարակվողի համագործակցության հիմնական եղանակներն են։

Առանձնացնում են դաստիարակության մեթոդների չորս խումբ՝

1. անձի գիտակցության ձևավորման մեթոդներ,
2. վարքի և գործունեության կազմակերպման մեթոդներ,
3. խթանման մեթոդներ,
4. ինքնադաստիարակության մեթոդներ։

Ընդ որում՝ չկան լավ կամ վատ, դյուրին կամ դժվար, արդյունավետ կամ անարդյունավետ մեթոդներ։ Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակության տվյալ մեթոդի ճիշտ և տեղին կիրառմամբ։ Մանկավարժական գործընթացում դաստիարակության մեթոդների կիրառման արդյունավետության հարցում կարևոր է տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու փորձը։

Նա պետք է ունենա բծախնդիր դիտողականություն, ուսումնասիրող, զննող ոգի, որպեսզի կարողանա երեխային ուսումնասիրել, բացահայտել, ճանաչել և ըստ այդմ էլ ընտրել ու կառուցել մանկավարժական գործընթացը։ Կրտսեր դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց (ընկերներ, ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ և այլք), շրջակա միջավայրի (բուսական և կենդանական աշխարհ), ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը։ Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, օլիմպիադաները, կրտսեր դպրոցականների աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիաները և այլն։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ տարրական դասարաններում են ձևավորվում սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, աղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն։ Ակնկալվում է, որ նշված

միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնարտահայտման և ինքնագնահատման հմտությունների, ինքնուրույնության մշակմանը[3]:

Հայ անվանի մանկավարժ Հ. Հինդլյանը գտնում էր, որ դաստիարակը պետք է լավ ճանաչի այն հոգին, որը ստանձնել է կերտել: Նա պետք է «խորաչափի տղուն բնությունը» ուսումնասիրի նրա հոգեբանությունը, հասկանա բնավորությունը, ճանաչի խառնվածքը, որպեսզի նրան առաջնորդելու համար ճիշտ ուղին գտնի, ընտրի դաստիարակության հարմար միջոցները: Ամենակարևորն այն է, որ դաստիարակը երբեք չպետք է փշրի, խորտակի երեխայի անհատականությունը: Դրա համար պետք է ուսումնասիրել և ճանաչել երեխային:

Կրտսեր դպրոցականների ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերն են՝

- համադպրոցական, դասարանական ծնողական ժողովները,
- դպրոցականի տուն կատարվող այցերը,
- ծնողներին դպրոց հրավիրելը,
- աշխատանքը ծնողական ակտիվի հետ,
- անհատական զրույցները և խորհրդատվությունները ծնողների համար,
- ծնողական համալսարանները, կոնֆերանսները և երեխաների դաստիարակության լավագույն փորձի փոխանակումը,
- ծնողների մանկավարժական լուսավորությունը,
- դպրոցի կապը այն հիմնարկների հետ, որտեղ աշխատում են ծնողները,
- աշակերտական գործերի, հատկապես ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպումը:

Դասարանի ծնողական ժողովները: Ծնողական ժողովների կազմակերպումը դպրոց-ընտանիք համագործակցության ավանդական, ամենատարածված և արդարացված ձևն է: Ծնողական ժողովների նպատակները, բովանդակությունն ու ձևերը պետք է որոշվեն՝ հիմք ընդունելով սովորողների, ծնողների և ծնող-դպրոց-երեխա համագործակցության ձևերն ու կարիքները: Այս խնդիրները

[3] Դաստիարակությունը դպրոցում., Ծրագիր և ուսումնական ձեռնարկ: - Երևան, 2003 թ.:

մանկավարժորեն ճիշտ և բարձր մակարդակով կազմակերպելու, ծնողական ժողովը ծագած խնդիրներին, ծնողների մանկավարժական լուսավորությանը ծառայեցնելու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մշակի ծնողական ժողովների թեմատիկա։ Ծնողական ժողովները չպետք է կազմակերպել միայն ուսումնական տարվա սկզբում և ուսումնական կիսամյակի վերջում։ Նրանք պետք է նվիրվեն ոչ միայն դասարանում իրականացվող կրթադաստիարակչական խնդիրներին, այլև ուղղված լինեն դպրոց-ընտանիք համագործակցության խնդիրներին, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ծնողների հոգեբանամանկավարժական, գեղագիտական գիտելիքների հարստացմանը։

Այցելություններ դպրոցականի ընտանիք։ Այս ձևը տարրական դպրոցում աշակերտների ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է։ Աշակերտների ընտանիք այցելելիս դասվարը ծանոթանում է իր աշակերտի ընտանեկան պայմաններին, պատկերացում է կազմում աշակերտի բնավորության, նրա հետաքրքրությունների ու հակումների, մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին։

Աշխատանք ծնողական ակտիվի հետ։ Ծանոթանալով աշակերտների ծնողների հետ՝ ուսուցիչը ստեղծում է ծնողական ակտիվ, որն իրեն հաճախակի օգնություն է ցուցաբերում և աջակցում դպրոցականների դաստիարակության և ուսուցման գործում։ Շատ ծնողներ հաճախակի այցելում են դպրոց, հետևում են մանկավարժական նորություններին, այդ մասին իրազեկում են ծնողական կոլեկտիվին, ակտիվ կերպով մասնակցում են ծնողական ժողովների կազմակերպմանը, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակմանը նվիրված միջոցառումներին և այլն։

Ծնողների մանկավարժական լուսավորությունը։ Ծնողները մանկավարժական գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ժողովների և կոնֆերանսների, զեկուցումների և դասախոսությունների ժամանակ այլև օգտվելով երեխաների զարգացմանը, կրթությանը, դաստիարակությանը նվիրված գրականությունից։

Այսպիսով, դպրոց-ընտանիքի համագործակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ ուսուցչի անհատական առանձնահատկություններով, մանկավարժական

վարպետությամբ, ծնողների մանկավարժական իրազեկվածությամբ և դպրոց-ընտանիք համագործակցությամբ: Կրտսեր դպրոցականի համար գլխավորն այն է, որ նա զգա մեծերի ուշադրությունն ու աջակցությունը, նրանց հետաքրքրություններն իր ուսումնական հաջողությունների նկատմամբ: Եվ եթե տարրական դպրոցում երեխայի մեջ պահպանվի հետաքրքրությունն ու հայտնագործելու ընդունակությունը, սերը ուսման նկատմամբ, կարելի է ասել, որ հետագա ուսումնառությունը կլինի արդյունավետ, և նա ուսումնական հաջողություններ կունենա նաև միջին և ավագ դպրոցում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մանկավարժական գործընթացը տարրական դպրոցում» թեմայի ուսումնասիրության և հետազոտության արդյունքում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Աշակերտների մեջ սովորելու հմտությունների և կարողությունների ձևավորման հիմքը դրվում է տարրական դասարաններում, դասվարի կողմից իրականացրած դաստիարակչական նշանակություն ունեցող աշխատանքի շնորհիվ:
- Դասվարը իր աշխատանքի միջոցով պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնության, ինքնավերահսկման, ինքնակրթության, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամությանը:
- Ելնելով ուսուցման առանձնահատկություններից՝ դասվարի գործունեության ողջ համակարգը պետք է ընդգրկի հետևյալը՝ միջավայրը, մարդկանց, հարաբերությունները, գաղափարախոսությունը, նպատակները, ուսուցման բովանդակությունը, հարմարվելու ունակությունը:
- Ուսուցման գործընթացում ուսուցչի և աշակերտների փոխգործակցության եղանակ է՝ ուսուցման մեթոդները, որի շնորհիվ աշակերտը յուրացնում է գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ, հմտություններ:
- Տարրական դպրոցի ուսուցչի առջև դրված են դաստիարակությանը համընդհանուր, նպատակային բնույթ տալու և դպրոցականի բազմակողմանի և ամբողջական դաստիարակությունն ապահովելու խնդիրներ:
- Տարրական դպրոցի կողմից իրականացված աշխատանքի արդյունքում է ապահովվում կրթական այնպիսի միջավայր, որը նպաստում է կրտսեր դպրոցականի անձի զարգացմանն ու արժեհամակարգի ձևավորմանը, ինչպես նաև ճանաչելով երեխայի անհատական-հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ արդյունավետ կրթական միջավայր է ստեղծում նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի բացահայտման և զարգացման համար:

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», ձեռնարկ ուսուցիչների համար, Այրեքս, Երևան, 2001թ., 320 էջ:
2. Ասատրյան Զ., «Տարրական կրթության մանկավարժություն», (ուսումնամեթոդական ձեռնարկ), Տիգրան Մեծ հրատարակչություն, Երևան, 2017 թ. 160 էջ:
3. Հինդլյան Հ., Փունջ մանկավարժական բանախօսութեանց, Կ. Պոլիս, Բերա, 1900, 240 էջ:
4. Դաստիարակությունը դպրոցում. Ծրագիր և ուսումնական ձեռնարկ: - Երևան, 2003:
5. Бабаева А.Х., Гуманистическая направленность подготовки будущего учителя к воспитательной работе с младшими школьниками. Автореф. дис. канд. пед. наук, М., 1992
6. Ломов Б. Ф. Вопросы общей, педагогической и инженерской психологии. – М., 1991, с. Педагогика, – 296 с: